ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 դեկտեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

174
(3024)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՖՈՒՏԶԱԼԻ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Ֆուտզալի Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնության 2024-25 մրցաշրջանում նոյեմբերի 25-ին «Երեւան ՖԱ-ի» եւ «Յունիսպորտի» միջեւ խաղից հետո վիճաբանություն եւ սկանդալ է գրանցել, ինչը կոծկվել է:

Բանն այն է, որ գործող չեմպիոն «Երեւանը» այս մրցաշարում կրեց իր առաջին պարտությունը, որն էլ դարձել է կռվի պատճառ:

Այս վիճաբանության կենտրոնում Ֆուտզալի Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ռուբեն Նազարեթյանն է, ով նաեւ մարզում է Ֆուտզալի «Երեւան» թիմին:

Փորձեցինք կապվել Ռուբեն Նազարեթյանի հետ՝ հասկանալու, թե ինչպես է տեղի ունեցել դեպքը, եւ ինչպես են այն կոծկել, սակայն նրա հետ կապ հաստատել չհաջողվեց. հեռախոսահամարն անհասանելի էր:

Ֆուտբոլի ֆեդերացիայից նույնպես հնարավոր չեղավ մեկնաբանություն ստանալ:

Ըստ ամենայնի՝ փորձ է արվում այս վեճը կոծկելու, ինչպես, օրինակ, սկանդալի մեջ հայտնված Խորեն Հովհաննիսյանի որդու՝ Ժորա Հովհաննիսյանի դեպքը:

Բանն այն է, որ Shamshyan.com-ը գրել էր, որ հենց այդ մրցաշարի օրը՝ նոյեմբերի 25-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Գարեգին Նժդեհ փողոցի 37/9 հասցեում գործող «Տոսկանա» հյուրանոցում երիտասարդ կինը, լինելով անօգնական եւ գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, պարտադրված սեռական հարաբերություն է ունեցել իր ծանոթի ընկերոջ հետ, իսկ իր ծանոթը իրեն ծեծի է ենթարկել՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Ոստիկանների կողմից ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ վերոնշյալ միջադեպը կատարել են Երեւանի բնակիչներ 37-ամյա եւ 30-ամյա տղամարդիկ:

Իսկ ավելի ուշ պարզվեց, որ բռնաբարության կասկածյալներից մեկը հայ հայտնի ու լեգենդար ֆուտբոլիստ Խորեն Հովհաննիսյանի որդին է: Ավելի ուշ Ժորա Հովհաննիսյանը հերքեց իր մասնակցությունը «Տոսկանա» հյուրանոցում տեղի ունեցած անհասկանալի պատմության վերաբերյալ:

Հավելենք, որ Ժորա Հովհաննիսյանը մշտապես եղել է սկանդալների կիզակետում: Տարիներ առաջ նա իր վարած Mercedes մակնիշի մեքենայով հարվածել էր Opel մակնիշի տաքսիի: Ավելի ուշ պարզվել էր, որ Ժորա Հովհաննիսյանը ալկոհոլի ազդեցության տակ է եղել:

Բայց, ստացվում է, որ սա ֆուտբոլի եւ ֆեդերացիայի շուրջ սկանդալ չստեղծելու նուրբ քայլ է՝ ծածկադմփոց:

Ով է Հարկադիր կատարման ծառայության պետի հավանական թեկնածուն եւ, ըստ, նախնական վարկածի, ում է ուզում արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը նշանակել Հարկադիր կատարման ծառայության պետ: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ թեկնածուն ԴԱՀԿ-ում երկար տարիներ գործունեություն ծավալած Դավիթ Բեգինյանն է, ով խիստ նեղսրտած տարիներ առաջ հեռացել էր համակարգից: 2020 թվականին «Ժողովուրդ»-ը գրել էր, որ 2019 թվականի հուլիսի 19-ին ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար էր նշանակվել արդարադատության գնդապետ Դավիթ Բեգինյանը, եւ շուրջ 8 ամիս կատարելով ԴԱՀԿ պետի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները՝ մարտի 9-ին ազատման դիմում գրեց, նեղացած հեռացավ: Նշենք, որ Դավիթ Բեգինյանը մինչեւ ԴԱՀԿ պետի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելը եղել է ԴԱՀԿ պետի երրորդ տեղակալը: Ու երբ նա նշանակվել էր ԴԱՀԿ պետի ժամանակավոր պաշտոնակատար, ԴԱՀԿ պետի երրորդ տեղակալի պաշտոնը թափուր էր մնացել: Բայց քանի որ ՀՀ արդարադատության նախկին նախարար Ռուստամ Բադասյանը որոշել էր ԴԱՀԿ պետի պաշտոնում նշանակել իր քավորին, Դավիթ Բեգինյանին հասկացրել են, որ այս ընթացքում ԴԱՀԿ ոլորտում հեղափոխություն չի արվել, մինչդեռ այդ ոլորտում ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պողոսյանից հետո պետք է այնպիսի հեղափոխական քայլեր արվեին, որ ներքեւից վերեւ զգային բոլորը: Բեգինյանը, այսպիսով, 8 ամիս անց ստիպված հեռացավ:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը օրերս ապահովագրել է շուտով կրճատվող ծառայողական մեքենաները՝ ընդհանուր պայմանագրի համար վճարելով 2 մլն 280 հազար դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ ՀՀ Ազգային ժողովը 2024 թվականի նոյեմբերի 22-ին պայմանագիր է կնքել «Սիլ Ինշուրանս» ՓԲԸ-ի հետ եւ ձեռք է բերել փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ: Այս պայմանագրով Ազգային ժողովն ապահովագրել է 41 մեքենա: Սա տարօրինակ չէր լինի, եթե Փաշինյանը գրիչը ձեռքին եթերում չպակասեցներ ծառայողական մեքենաների քանակը, եւ Ալեն Սիմոնյանն էլ, նրանից ոգեւորված, չգրեր, թե «ՀՀ ԱԺ-ն մինչ հեղափոխությունը՝ 2018 թվականի սկզբին, ունեցել է 81 տրանսպորտային միջոց՝ հետագայում կրճատելով դրանք: 2018 թ. - 10 ավտոմեքենա, 2019 թ. - 4 ավտոմեքենա, 2020 թ. - 3 ավտոմեքենա, 2021 թ. -17 ավտոմեքենա, 2022 թ. - 2 ավտոմեքենա, 2023 թ. - 3 ավտոմեքենա, 2024 թվականին մեկնարկել է եւս 12 ավտոմեքենայի կրճատման գործընթացը, որն ավարտին կհասցվի տարեվերջին: Իսկ 2025 թվականի սկզբին ՀՀ ԱԺ-ն կունենա ընդամենը 30 տրանսպորտային միջոց: Կրկին՝ 2018 թ. - 81 մեքենա, 2025 թ. - 30 մեքենա», - գրել էր Սիմոնյանը: Բայց ԱԺ նախագահի հայտարարությունը, կարծես, հենց իր կողմից նշանակված աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը չի կարդում, եւ մեկ ամիս հետո 30 ավտոմեքենա ունեցող ԱԺ-ի համար 41 ավտոմեքենայի ապահովագրություն է անում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ում պաշտոնակռիվ է սկսվել, իսկ կռվախնձորն էլ ԱԺ առողջապահության հանձնաժողովի նախագահի, ապա նաեւ տեղակալի պաշտոններն են: Ինչպես հայտնի է, Նարեկ Զեյնալյանի հեռանալուց հետո ՔՊ-ն փնտրում էր հանձնաժողովի նախագահի թեկնածու, որը կապ ունենա բժշկական ոլորտի հետ: «Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները հայտնում են, որ ուրբաթ օրը կայացած ՔՊ խմբակցության դռնփակ նիստի ընթացքում 10 դեմ ձայնով հանձնաժողովի նախագահի թեկնածու է ընտրվել Արսեն Թորոսյանը, որին առաջադրել է նախկին թղթակից, հիմա ԱԺ պատգամավոր, բայց առողջապահության ոլորտի հետ առնչություն չունեցող (ԱԺ այդ հանձնաժողովի անդամ) Էմմա Պալյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հիմա ՔՊ-ական կանայք պայքարում են հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնի համար: Այսպիսով՝ ArmLur.am-ը գրել էր, որ առողջապահության հանձնաժողովի փոխնախագահ, ՔՊ-ական Լուսինե Բադալյանը, ի համերաշխություն վերջերս մանդատը վայր դրած Նարեկ Զեյնալյանի, հրաժարվել է զբաղեցնել հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնը: «Ժողովուրդ» օրաթեթի տեղեկություններով՝ հանձնաժողովի փոխնախագահի պաշտոնի համար պայքարում են ՔՊ-ական պատգամավորներ Էմմա Պալյանը եւ «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի նախկին բուժքույր Հռիփսիմե Հունանյանը:

ԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԵՆՔ...». ԼԵՎՍ ԴԱՎԹՅԱՆ

Վերջին շրջանում մշակութային ոլորտում ամենահայտնի իրադարձությունը թատրոնների շուրջ ստեղծված իրավիճակն է. տնօրեններ են փոխվում, թատրոններ են փակվում, դերասաններ են անգործ մնում:

Վերջին ամիսներին հատկապես արդիական է «Գոյ» թատրոնի շուրջ ստեղծված իրավիճակը: Թատրոնը փակվեց, աշխատակիցները տեղափոխվեցին Սունդուկյան թատրոն, սակայն առկա աշխատելաոճի տարբերությունը հնարավորություն չի տալիս աշխատել նույն տարածքում:

«Գոյ» թատրոնին նախորդել էր «Մհեր Մկրտչյան արտիստական թատրոն»-ի գեղարվեստական ղեկավարի հաստիքի շուրջ առկա իրարանցումը: Մհեր Մկրտչյանը հերթական անգամ չնշանակվեց թատրոնի տնօրեն, եւ նրան փոխարինեց իշխանական հայացքներով հայտնի Տաթեւ Մելքոնյանը:

Դեռեւս երեք տարի առաջ էլ փակվել էր «Կամերային երաժշտական թատրոնը»:

Այս եւ այլ թեմաների մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է դերասան Լեւս Դավթյանի հետ, ով նախկինում աշխատում էր «Մհեր Մկրտչյան արտիստական թատրոնում»:

Զրույցի ընթացքում քննարկվել են «Մհեր Մկրտչյան արտիստական թատրոնում» տեղի ունեցած իրադարձությունների, քաղաքական թեմաների մասին չլռելու եւ պաշտոնանկությունների վերաբերյալ հարցեր:

Ստորեւ ներկայացնում ենք հարցազրույցը՝ համառոտ:

-Լեւս, դեռ փետրվարին սոցցանցի Ձեր էջում հրապարակում կատարեցիք այն մասին, որ Դուք եւ հայտնի ու սիրված եւս մի քանի դերասաններ հեռանում եք «Մհեր Մկրտչյան արտիստական թատրոնից»: Ինչպե՞ս այդ ամենը ստացվեց եւ ինչո՞ւ:

-Սա մեր գործող իշխանությունների կողմից դասական սխեմա էր. ցավեցնել մարդկանց ամենացավոտ կետով՝ իրենց աշխատանքով: Հեռացնում են մարդկանց իրենց ամենակարեւոր գործից: Ժողովրդավար երկիր է: Այդպես են պատժում այն մարդկանց, ովքեր ազատ արտահայտում են իրենց կարծիքը: Թատրոնի գեղարվեստական ղեկավար Մհեր Մկրտչյանին, բնականաբար, շատ անհիմն պատճառաբանությամբ հեռացրին աշխատանքից՝ կրճատելով հաստիքը: Պատճառաբանում էին, որ Մհեր Մկրտչյանը չունի մասնագիտական կրթություն, իսկ Մհերը այն մարդն է, ով մշակույթի ոլորտում ամենաբարձր որակավորում ունեցող համալսարաններից մեկն է ավարտել: Հաջորդիվ արդեն բարոյականության հարց էր այնտեղ մնալը, քանի որ թե՛ ինձ, թե՛ մյուս դերասաններին, որոնց հետ դուրս եկա թատրոնից, աշխատանքի հրավիրել էր Մհեր Մկրտչյանը, եւ միասին էինք ստեղծագործում: Այս թեմայով շատ եմ խոսել, բայց կկրկնեմ, որ մենք այն հույսով ենք, որ վերադառնալու ենք, քանի որ չի կարելի այդպես մտնել մարդու տուն եւ այնպես անել, որ մարդն իր տնից դուրս գա: Ես լիահույս եմ, որ այս ամենը ժամանակի հարց է:

-Իշխանության կողմից մշտապես խոսվում է մշակույթի զարգացման եւ տարածման մասին, սակայն Դուք էլ նշեցիք, որ իրենց բնորոշ վարքագծով մարդկանց հեռացնում են աշխատանքից, փակում թատրոնները, ինչպես «Գոյ»-ի դեպքում է: Ինչո՞ւ է, ըստ Ձեզ, լարվածությունը մեծ հենց թատրոնների շուրջ:

-Ամեն ինչ իրենց կողմից շատ համաչափ է եւ ճիշտ է գնում: Այս համատարած լռությունն ու հարմարվելու գործընթացը հանգեցնելու է նրան, որ բոլոր այն մարդիկ, ովքեր որ կարծել են՝ եթե այս պահին լռեն ու այս իշխանությունների մասին վատ բան չասեն, չբարձրաձայնեն այն, ինչ տեսնում են, չասեն իրողությունը, ապա իրենք փրկվելու են, եւ իշխանությունն իրենց օրվա հացին չի կպչելու: Բայց չէ, հերթով: Ես նույնիսկ վստահ եմ, որ փակ ժողովներ են եղել, որոշումներ են կայացվել, եւ շուտով բոլոր թատրոնները փակվելու են, բոլոր մշակութային օջախները, որոնք իրենց պետք չեն: Հիմա իրենց ազգային հերոսը հարկ վճարողն է, իրենց մշակույթ պետք չէ: Կմնա երկուերեք թատրոն, մնացածն էլ պետք չեն: Թող լուռ նստեն բոլորը ու սպասեն, որ հերթը հասնի իրենց թատրոններին, իրենց գործերին, իրենց ընտանիքներին: Թող շարունակեն համատարած լռել:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ,
ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՔՊ–Ն ՊԱՐՏՎԵՑ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Գյումրիում երեքշաբթի գիշերը ավարտվեց համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրությունները:

Ընտրությունների արդյունքում առավելագույն ձայները ստացավ Սարիկ Մինասյանը, ով, վարչապետի որոշմամբ, կնշանակվի Գյումրու քաղաքապետի պաշտոնակատար, իսկ արդեն համայնքապետի ընտրությունների ժամանակ նա կգլխավորի ՔՊ ցուցակը: Նա ստացել է 253 ձայն:

Սարիկ Մինասյանը միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի տնօրենն է: Ուշագրավ է, որ վերջինս իշխող կուսակցության անդամ չէ:

2018 թվականին ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր «Լուսավոր Հայաստան» կուսակցության թիվ 11 ընտրատարածքի տարածքային ընտրական ցուցակով:

Նշենք, որ Սարիկ Մինասյանից բացի, համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրություններին մասնակցում էին նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Դավիթ Առուշանյանը, Կարեն Սարուխանյանը, Գյումրու նախկին փոխքաղաքապետ Վահագն Մկրտչյանը, Գյումրու ավագանու անդամ Շավարշ Արամյանը, 33-ամյա Լեւոն Անանյանը, Շիրակի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման եւ իրացման բաժնի ավագ մասնագետ Էմմա Բարսեղյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻՆ Է ՏՈՒԺՈՒՄ

Դեռ դեկտեմբեր ամսվա սկզբին e-draft համակարգում, որպես նախագծի մշակող, Տարածքների կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը դրել էր 2 նախագիծ՝ մեկը գյուղական ամբուլատորիաների օպտիմալացում Գեղարքունիքի մարզում, մյուսը Արարատի մարզում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Առողջության իրավունք» ՀԿ նախագահ Անուշ Պողոսյանը ասաց. «Մենք հիմնավորումներ սկսեցինք խնդրել տարբեր գերատեսչություններից՝ հասկանալու համար՝ ինչ հիմքով են այդ ամբուլատորիաները օպտիմալացվում, քանի որ նախագծի մշակողը երեւում էր Տարածքային կառավարման նախարարությունը եւ մենք առաջին հարցումը արեցինք այդ նախարարությունից: Պատասխանը եղավ՝ վերահասցեագրվել է առողջապահության նախարարությանը, քանի որ ՏԿԵՆ-ը իրավասու չէ իր լիազորության շրջանակում կատարել բարեփոխումներ, որոշել առողջապահական հիմնարկների օպտիմալացման ծրագրերի հետ կապված խնդիրները»:

Անուշ Պոսոսյանը պնդում է, որ ՏԿԵՆ-ի մեկնաբանությունը այն մասին է, որ իրենց լիազորություններից դուրս է այս հարցով զբաղվելը, բայց այդ, լիազորություններից դուրս լինելով հանդերձ, e-draft-ում դրել են, եւ հստակ երեւում է, որ նախագիծ մշակողները իրենք են:

Նրա խոսքով՝ ստացվում է, որ կատարվում է երկու խոշոր մարզերի ամբուլատորիաների օպտիմալացում, բայց բոլորը իրար վրա են գցում, որի արդյունքում տուժելու է միայն գյուղի բնակիչը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ՏԿԵՆ-ի մամուլի քարտուղար Սոնա Հարությունյանի հետ, վերջինս հորդորեց գրավոր հարցում ուղարկել նախարարություն:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ՄՈՏ ԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒՆ». ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԳՆ

Մենք մոտ ենք Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության հասնելուն: Այս մասին հայտարարել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը:

«Խաղաղության ապահովումը կնպաստի տարածաշրջանի զարգացմանը եւ նոր հնարավորություններ կստեղծի: Թուրքիան աջակցում է բոլոր ջանքերին այս գործընթացում: Մեր երկիրն աջակցում է կողմերի միջեւ բանակցություններին, որոնք ընթանում են երկկողմ հիմունքներով՝ առանց միջնորդների», - նշել է Ֆիդանը:

ՍԱՐԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԸ՝ ԺՊ

Գյումրու համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրություններում 253 ձայնով հաղթեց Սարիկ Մինասյանը:

Լեւոն Անանյանը հավաքել է 91 ձայն, Դավիթ Առուշանյանը՝ 220, Շավարշ Արամյանը՝ 88, Էմմա Բարսեղյանը՝ 113, Վահագն Մկրտչյանը՝ 118, Կարեն Սարուխանյանը՝ 143 ձայն:

Փրայմերիզը կամ պաշտոնակատարի նախնական ընտրությունը Հայաստանում ըստ էության առաջին անգամ է անցկացվում. գործընթացը մեկնարկել է դեկտեմբերի 8-ին:

Հիշեցնենք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը դեկտեմբերի 4-ին իր ֆեյսբուքյան էջում հայտնել է՝ ովքեր կմասնակցեն Գյումրու քաղաքապետի նախնական ընտրություններին:

Նա նշել է, որ համապատասխան որոշումը դեկտեմբերի 3-ին կայացվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նիստում, քաղաքապետի պաշտոնակատարի թեկնածուներ են Լեւոն Անանյանը, Դավիթ Առուշանյանը, Շավարշ Արամյանը, Էմմա Բարսեղյանը, Սարիկ Մինասյանը, Վահագն Մկրտչյանը եւ Կարեն Սարուխանյանը: Նախնական քվեարկության արդյունքներով առավելագույն ձայն ստացած թեկնածուին Փաշինյանը կնշանակի Գյումրու քաղաքապետի պաշտոնակատար:

Պարտադիր պայման էր, որ թեկնածուները ոչ միայն առնվազն վերջին 6 ամսում հաշվառված լինեն Գյումրիում, այլեւ լինեն ՔՊ անդամ, աջակից կամ համակիր:

ՀԱԿՈԲ ԱՍԼԱՆՅԱՆԸ ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է ՔՊ–Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԱԺ պատգամավոր Հակոբ Ասլանյանը ՔՊ-ի հետ համագործակցությունը դադարեցնում է եւ դուրս գալիս խմբակցությունից:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատգամավորը նշեց, որ մեկ ամսով է կասեցնում իր մասնակցությունը «ՔՊ» խմբակցությանը, եւ որ այդ ընթացքում հարցազրույցներ չի տալու:

Պատճառը իր ընկեր Հովիկ Աղազարյանի շուրջ տեղի ունեցող զարգացումներն են:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՍՏԻՊՎԱԾ ՏԱՐՀԱՆՎԵԼ ԵՆ

ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգում մոլեգնող անտառային հրդեհների պատճառով Մալիբուի բնակիչները ստիպած են եղել տարհանվել, քանի որ հրդեհը սպառնում է նրանց տներին: Բացի այդ, կրակի տարածման պատճառով տեղի են ունեցել հոսանքազրկումներ, փակվել են ճանապարհները: Այս մասին հաղորդում է Reuters գործակալությունը:

Հրդեհը, որը ստացել է «Ֆրենկլինի հրդեհ» անվանումը, դեկտեմբերի 10-ին երկու հեկտարից տարածվել է գրեթե 1100 հեկտար տարածության վրա: Կրակի արագ տարածմանը նպաստում են ուժգին քամիները:

Հրդեհը ոչնչացրել է մի քանի տուն. զոհեր եւ վիրավորներ չկան:

Լոս Անջելեսի հրշեջ ծառայության ղեկավարը հայտարարել է, որ հրդեհաշիջման աշխատանքներում ներգրավված 700 հրշեջներին կմիանան եւս 300-ը:

Հրդեհն առայժմ չի հաջողվել մեկուսացնել:

ԱՄՆ-Ն ԿԻԵՎԻՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ 20 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿ

ԱՄՆ ֆինանսների նախարարությունը հայտարարել է Ուկրաինային 20 միլիարդ դոլարի վարկ տրամադրելու որոշման մասին, որը կմարվի Ռուսաստանի Դաշնության սառեցված ակտիվներից ստացված եկամուտներով:

«ԱՄՆ ֆինանսների նախարարությունն այսօր հայտարարում է Ուկրաինային 20 միլիարդ դոլար հատկացնելու մասին՝ որպես G7-ի նախաձեռնության մաս՝ 50 միլիարդ դոլարի վարկերի համար: Այս գումարը կվերադարձվի ռուսական սառեցված ակտիվներից ստացված եկամուտներով»,-ասվում է նախարարության հայտարարության մեջ:

Հունիսին Իտալիայում G7-ի գագաթնաժողովի մասնակիցները քաղաքական համաձայնություն ձեռք բերեցին ռուսական սառեցված ակտիվներից ստացված եկամուտներն օգտագործել Ուկրաինային օգնելու համար: Խոսքը վերաբերում էր Կիեւին մինչեւ այս տարվա վերջ 50 միլիարդ դոլարի վարկ տրամադրելու մասին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դեկտեմբերի 19-ին կայանալիք տարվա վերջին գագաթնաժողովում Եվրամիության երկրների ու կառավարությունների ղեկավարները կքննարկեն Սիրիայում Բաշար Ասադի կառավարման ավարտից հետո ստեղծված իրավիճակը: Այս մասին հայտարարել է Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիո Կոստան:

«Դեկտեմբերի 19-ին կայանալիք Եվրոպական խորհրդի թեման կլինի Սիրիան»,- գրել է նա X-ում:

Կոստան ասել է, որ ինքը «սերտ կապի մեջ է Մերձավոր Արեւելքի առաջնորդների հետ այս հարցում՝ իրավիճակը գնահատելու համար»:

«Մարդու իրավունքները հարգելը եւ փոքրամասնությունների պաշտպանությունը, ինչպես նաեւ երկրի տարածքային ամբողջականությունը առանցքային են ԵՄ-ի համար»,- հավելել է նա:

Տ. ԱՎԻՆՅԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՏԵՍՆՈՒՄ ԵՆ ԻԶԱԲԵԼԼԱ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ

ՆՈՐ ՔԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ՝ ԱՎԱԳԱՆԻՈՒՄ

«Ազգային առաջընթաց» խմբակցությունը Տիգրան Ավինյանի պաշտոնանկության դեպքում քաղաքապետի թեկնածու դիտարկում է խմբակցության քարտուղար Իզաբելլա Աբգարյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ Հայկ Գրիգորյանի «Ազգային առաջընթաց» կուսակցությունը պատրաստվում է Տիգրան Ավինյանի պաշտոնանկության գործընթաց սկսել:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ուրբաթ օրը ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության՝ Հայկ Մարությանի թիմի անդամները, այսինքն՝ անկուսակցական 5 եւ «Նոր ուժ» կուսակցության 3 անդամները, քննարկել են Հայկ Գրիգորյանի՝ քաղաքապետի պաշտոնանկության նախաձեռնությունը: Քննարկման արդյունքում որոշվել է, որ եթե միանան Հայկ Գրիգորյանի նախաձեռնությանը, ապա իրենց թեկնածուն լինելու է Իզաբելլա Աբգարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Իզաբելլա Աբգարյանը նշում է՝ գտնում ենք, որ մայրաքաղաքի կառավարման իրավունքը պետք է հանձնել երեւանցիներին, մենք պատրաստ ենք ցանկացած ձեւաչափով միանալ ընդդիմադիր ուժերին, սակայն պաշտոնանկության գործընթացի հետ կապված մտահոգություններ ունենք, քանի որ ընդդիմադիր խմբակցությունները 33 ձայն չունեն:

«Իսկ գործընթացը տապալելու դեպքում, մենք միայն մեկ մարդու լավություն կանենք՝ Տիգրան Ավինյանին, ով եւս մեկ տարվա իմունիտետ կստանա:

Բացի դա, պաշտոնանկության նախագծում պարտադիր պետք է նշված լինի ընդդիմության միասնական թեկնածուն, անուն-ազգանուն պետք է լինի:

«Ազգային առաջընթաց» կուսակցության ղեկավար Հայկ Գրիգորյանն առաջարկել է, որ ամեն խմբակցություն իր թեկնածուին առաջադրի: Ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցությունը 8 կողմ ձայնով որպես քաղաքապետի թեկնածու տեսնում է ինձ, մյուս խմբակցությունները եւս կարող են իրենց թեկնածուներին առաջադրել:

Հայկ Գրիգորյանի «Ազգային առաջընթաց» կուսակցության անդամները հենց Հայկ Գրիգորյանի թեկնածությունն են առաջադրում, իսկ արդեն խմբակցության մեծամասնության թեկնածուն ես եմ:

Ի վերջո, բոլորս պետք է գանք համաձայնության մեկ թեկնածուի շուրջ, այստեղ ես նույնպես բարդություն եմ տեսնում, կարծում եմ՝ հենց սրա համար Հայկ Մարությանին հեռացրին, որպեսզի չլինի թեկնածու, որն անվիճելի կլինի:

Իսկ թե ինչո՞ւ է խմբակցությունն ինձ առաջարկում. ես անկուսակցական եմ, եւ կարող եմ մյուս խմբակցություններին կապող օղակ լինել, բացի դրանից՝ ունեմ մեծ փորձ ավագանիում»,- ասում է Իզաբելլա Աբգարյանը:

Ք. Մ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՖՐԱՆՍԻԱ. 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ

Դեկտեմբերի 10-ին ՀՀ պաշտպանության նախարարությունում անցկացվել են Հայաստան-Ֆրանսիա ռազմավարական պաշտպանական խորհրդակցությունները՝ ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության եւ միջազգային համագործակցության վարչության պետ Լեւոն Այվազյանի ու Ֆրանսիայի զինված ուժերի նախարարության միջազգային համագործակցության եւ ռազմավարության գլխավոր վարչության Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի ու բազմակողմ համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Էսկորսիայի գլխավորությամբ:

Խորհրդակցությունների ընթացքում ամփոփվել են համագործակցության շրջանակում 2024 թվականին իրականացված աշխատանքները եւ նախանշվել են հաջորդ տարվա ծրագրերը: Կողմերը հաստատել են վերջին շրջանում ակտիվ համագործակցության ռազմավարական նշանակությունը եւ սահմանել են համագործակցության զարգացման ավելի բարձր նշաձող:

Առանձնապես կարեւորվել է համագործակցությունը պաշտպանական պլանավորման, ռազմական կրթության ու վարժանքների, խորհրդատվական աջակցության, տարբեր զորատեսակների պատրաստության, ռազմատեխնիկական եւ այլ ուղղություններով:

Ալեքսանդր Էսկորսիայի գլխավորած պատվիրակությանն ընդունել է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանը:

Քննարկվել են ՀՀ ՔՈՒ կերպափոխման գործընթացի առաջնահերթությունները եւ այդ շրջանակում Ֆրանսիայի հետ համագործակցության ընթացքը: Գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանը գոհունակություն է հայտնել համագործակցության ներկայիս մակարդակից եւ հույս հայտնել, որ այն կշարունակի զարգանալ:

Կողմերը խորհրդակցությունների ընթացքում կարծիքներ են փոխանակել նաեւ տարածաշրջանային ու միջազգային անվտանգությանն առնչվող հարցերի շուրջ:

Խորհրդակցությունների արդյունքում ստորագրվել է Հայաստան-Ֆրանսիա պաշտպանական համագործակցության 2025 թվականի ծրագիրը, որն ընդգրկում է մի քանի տասնյակ միջոցառումներ ՔՈՒ կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում:

ՔՊ-ԱԿԱՆ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԸ՝ ՀԱԿՈԲ ԱՍԼԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Քաղաքական դավաճանությունը պոզով ու պոչով չի լինում, այլ լինում է հենց այսպես՝ թե՛ Աղազարյանի, թե՛ Ասլանյանի դեպքում: Այս մասին ֆեյսբուքյան էջում գրել է ՔՊ պատգամավոր Արսեն Թորոսյանը:

«Այսպես կոչված «անձնականը» մի պահ կողքի դնելով, հետաքրքիր է Հակոբ Ասլանյանը խմբակցության, նախաձեռնողի եւ այլ փակ նիստերից մի կոնկրետ լրագրողի համակարգված ձեւով տեղեկատվության, այդ թվում՝ պետական գաղտնիք պարունակող արտահոսքեր կազմակերպելը սեփական թիմի նկատմամբ դավաճանություն չի՞ համարում: Իսկ կարո՞ղ է մի նման համակարգած մեխանիզմի մաս էլ հենց ինքն է կազմում:

Ի դեպ, քանի որ այս թեման շատ է շահարկվում, ուզում եմ տեղեկացնել, որ Հովիկ Աղազարյանը կուսակցությունից իր հեռացման հարցը քննարկելիս ոչ միայն չի հերքել արտահոսքերի այդ համակարգված մեխանիզմի գոյությունը, այլեւ դրանում որեւէ «խնդիր չի տեսել»»,- գրել է Թորոսյանը:

ՊԵՏԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

ՁԻՆՎՈՐԻ ԵՆ ՓՈՐՁԵԼ ԲԱՆԱԿԻՑ ԱԶԱՏԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Վարդան Հովհաննիսյանը զբաղեցրել է ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Երեւան քաղաքի թիվ 1 տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժնի պետի պաշտոնը եւ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իրավադրույթների ուժով հանդիսացել է հանրային ծառայող, հետեւաբար՝ պաշտոնատար անձ, եւ ի պաշտոնե լիազորված է եղել կազմակերպել քաղաքացիների զինվորական հաշվառման եւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի գործընթացի իրականացման աշխատանքները: Վարդան Հովհաննիսյանը, իր ծառայողական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Արտուր Սարգսյանի օժանդակությամբ զորակոչիկներ Վլադ Թադեւոսյանի, Գեղամ Գալստյանի եւ Հարություն Ենգիբարյանի օգտին ապօրինի գործողություն կատարելու՝ բժշկական հաստատությունների եւ կենտրոնական բժշկական հանձնաժողովի անդամների միջոցով զորակոչիկների համար ցանկալի բժշկական ախտորոշումներ ստանալու եւ դրանց հիման վրա զինվորական ծառայության հերթական զորակոչից տարկետում տրամադրելու կամ զինվորական ծառայությունից ազատելու եւ պահեստազորում հաշվառելու հիմքեր ստեղծելուն նպաստելու համար, Արթուր Թադեւոսյանի, Գեղամ Գալստյանի եւ Կարապետ Ենգիբարյանի կողմից պաշտոնատար անձ հանդիսացող՝ ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Երեւան քաղաքի թիվ 1 տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանին կաշառք տալուն եւ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից, այդ զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից ազատվելու օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության պայմաններում հիվանդության սիմուլյացիայի ճանապարհով խուսափելու փորձ կատարելուն, ինչպես նաեւ տարկետում ստանալուն:

Արտուշ Գարուշի Սարգսյանը խորհուրդներ, ցուցմունքներ եւ տեղեկություններ տրամադրելու, ինչպես նաեւ խոչընդոտները վերացնելու եղանակով օժանդակել է զորակոչիկներ Վլադ Թադեւոսյանի, Գեղամ Գալստյանի եւ Հարություն Ենգիբարյանի օգտին ապօրինի գործողություն կատարելու՝ բժշկական հաստատությունների եւ կենտրոնական բժշկական հանձնաժողովի անդամների միջոցով զորակոչիկների համար ցանկալի բժշկական ախտորոշումներ ստանալու եւ դրանց հիման վրա զինվորական ծառայության հերթական զորակոչից տարկետում տրամադրելու կամ զինվորական ծառայությունից ազատելու եւ պահեստազորում հաշվառելու հիմքեր ստեղծելուն նպաստելու համար, Արթուր Թադեւոսյանի, Գեղամ Գալստյանի եւ Կարապետ Ենգիբարյանի կողմից պաշտոնատար անձ հանդիսացող՝ ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Երեւան քաղաքի թիվ 1 տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանին կաշառք տալուն եւ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից, այդ զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից ազատվելու օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության պայմաններում հիվանդության սիմուլյացիայի ճանապարհով խուսափելու փորձ կատարելուն, ինչպես նաեւ տարկետում ստանալուն:

Գեղամ Գալստյանը, հանդիսանալով ըմբշամարտիկ եւ նախկինում սպորտի բնագավառում ունենալով նվաճումներ, երկու անգամ երեք տարի ժամկետով ստացել է տարկետումներ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից եւ ցանկանալով կաշառքի դիմաց ազատվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից՝ դիմել է իր մտերիմ Լաերտ Դավթյանին եւ վերջինիս միջոցով 2024 թվականի մայիսի 11-ին ծանոթացել է Արտուշ Սարգսյանի հետ: Արտուշ Սարգսյանը, տեղեկանալով, որ Գեղամ Գալստյանը ցանկանում է կաշառքի դիմաց ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից, խոստացել է օժանդակել վերջինիս եւ հայտնել, որ դրա համար պաշտոնատար անձին պետք է տալ կաշառք, ինչին Գեղամ Գալստյանը համաձայնել է: Դրանից հետո՝ 2024 թվականի մայիսի 11-ին, Արտաշատ քաղաքում հանդիպելով Գեղամ Գալստյանին, Արտուշ Սարգսյանը պահանջել է վերջինիս վերաբերյալ առկա բժշկական փաստաթղթերը, դրանք իրավասու պաշտոնատար անձանց ներկայացնելու նպատակով...

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԱՐՄԱՎԻՐԻ ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱԽԱՋԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԵՆ ԱՌԱՋԱԴՐԵԼ

ԻՆՉ Է ՓՈՐՁՈՒՄ ՀԱՍԿԱՑՆԵԼ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ապրես Անդրանիկ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, զբաղեցնելով ՀՀ Արմավիրի մարզի դատախազության դատախազի պաշտոնը, երկու դեպքում տարեկան հայտարարագրերում ներկայացրել է կեղծ տվյալներ եւ թաքցրել է հայտարարագրման ենթակա տվյալները:

Ի դեպ՝նախկին դատախազի շուրջ ուշագրավ իրավիճակ էր ստեղծվել, ու այս նոր մեղադրանքը խիստ կասկածների տեղիք է տալիս:

Ավելի վաղ հայտնել էինք, որ ««Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ գաղտնալսված դատախազ Ապրես Գրիգորյանը, որին գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը գաղտնալսումից հետո աշխատանքից հեռացրեց, դատարանում հաղթել է Աննա Վարդապետյանին:

Այս տարվա՝2024 թվականի մայիսի 24-ին Վճռաբեկ դատարանը բավարարել է Ապրես Գրիգորյանի Վճռաբեկ բողոքը: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ պետք է վերացվի ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ 11.10.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը, եւ կայացվի նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 17.08.2023 թվականի որոշումը եւ Ապրես Գրիգորյանի միջնորդությունը բավարարել՝ կասեցնել ՀՀ գլխավոր դատախազի 13.07.2023 թվականի «Կոտայքի մարզի դատախազության դատախազ Ապրես Գրիգորյանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին» որոշման եւ 14.07.2023 թվականի «Կոտայքի մարզի դատախազության դատախազ Ապրես Գրիգորյանին պաշտոնից ազատելու մասին» թիվ 313-Ա հրամանի կատարումը: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է եւ բողոքարկման ենթակա չէ»:

Այսպիսով՝ գլխավոր դատախազը ստիպված է կատարել դատարանի վճիռը եւ գաղտնալսված դատախազին հետ ընդունել աշխատանքի:

Հիշեցնենք, որ Կոտայքի մարզի դատախազության՝ արդեն նախկին դատախազ Ապրես Գրիգորյանի եւ մեկ այլ դատախազի աշխատասենյակում ամիսներ առաջ ԱԱԾ-ն խուզարկություն էր իրականացրել, նրանց ձերբակալել, ապա բաց էր թողել: Մամուլը գրեց, որ Գրիգորյանը դատախազ Աննա Վարդապետյանին հայտնել է ԱԱԾ-ում իրեն խոշտանգելու մասին, իսկ Վարդապետյանը խոշտանգման մասին դատախազի հաղորդումն ուղարկել է ԱԱԾ, այսինքն՝ այն նույն մարմին, որտեղ, ըստ Գրիգորյանի, իրեն խոշտանգել են:

Արդյունքում՝ գաղտնալսված ու խոշտանգված դատախազներին ազատեցին պաշտոնից, իսկ ահա Կոտայքի մարզի դատախազ Պետրոս Պետրոսյանը ազատվեց պաշտոնից այն բանի համար, որ փորձել էր հետամուտ լինել, որ դատախազին խոշտանգողները պատժվեն: Դատախազին աշխատասենյակում խոշտանգելն անպատիժ թողնելու պատմությունն էլ դարձել էր Պետրոս Պետրոսյանի ու գլխավոր դատախազի տեղակալ Գեւորգ Բաղդասարյանի հրաժարականի պատճառը:

«Գլխավոր դատախազը ե՞րբ է գաղտնալսված ու խոշտանգված դատախազին ընդունելու աշխատանքի՝ կատարելով դատավճիռը»: Ուշագրավն այն է, որ այս ամենից հետո Ապրես Գրիգորյանին մեղադրանք են առաջադրել:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԴԻԱՆԱ ՂԶՐՈՅԱՆԸ ԴԻՄԵԼ Է ՔԿ

Տրանսգենդեր Դիանա Ղզրոյանը, ով այս օրերին Բրազիլիայում մասնակցում է «Miss star internotional» տրանսգենդերների գեղեցկության մրցույթին, իր ֆեյսբուքյան էջում տեսանյութ է հրապարակել, որտեղ հայտնում է, որ իր հանդեպ ատելության խոսքի համար սեպտեմբեր ամսին դիմում-բողոք է ներկայացրել ՀՀ Քննչական կոմիտե, որպեսզի պարզվի այն մարդկանց ինքնությունը, ովքեր վատ են արտահայտվել իր անձի հանդեպ:

Արդեն հոկտեմբեր ամսին տրանսգենդերը ՀՀ Քննչական կոմիտեից ստացել է ծանուցում, ըստ որի՝ հարուցվել է քրեական վարույթ:

Նա եւ Լիլիթ Մարտիրոսյանը հարցաքննվել են եւ մինչեւ իր մրցույթին մասնակցելը՝ արդեն իսկ շատ մարդկանց ինքնություն պարզվել է:

Նրանք նույնպես կանչվել են Քննչական կոմիտե եւ հարցաքննվել են:

ՖԻԼՄԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ես դերասան եմ, իմ դերն եմ խաղացել»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց վերջին շրջանում թեժ քննարկման առիթ դարձած «Կայսրության թեւեր» ֆիլմի դերասան Արմեն Մարությանը:

Հարցին, թե ինչպես է վերաբերվում այն փաստին, որ Դատախազությունն ընթացք է տվել ֆիլմի հետ կապված գործին, դերասանն ասաց՝ «ուր ուզում են՝ թող ներկայացնեն, ես ի՞նչ կապ ունեմ դրա հետ: Ինձ դերը տվել են, նայել եմ, կերպար եմ ստեղծել, խաղացել եմ»:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանի հետ՝հասկանալու համար՝ի՞նչ փուլում է գործը: Վերջինս ասաց, որ դեռ որեւէ նորություն չկա, նորության դեպքում պաշտոնական ձեւով կտեղեկացնեն:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարարությունից հայտնել էին, որ մասնագիտական վերլուծություն են իրականացրել Գոռ Վարդանյանի «Կայսրության թեւեր» ֆիլմի վերաբերյալ եւ դիմել էին Դատախազություն:

ՄԱՆԲԱՄԱՄԵԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը պարբերաբար ահազանգեր է ստանում ուսումնական հաստատություններում բռնության դեպքերի վերաբերյալ:

Նման ահազանգերից մեկն առաջին դասարանում դասվարի կողմից երեխայի նկատմամբ ծեծի դեպքն էր, ինչի ահազանգը ստանալուն պես՝ նախարարությունը դիմել է Կրթության տեսչական մարմին, ոստիկանություն եւ Դատախազություն: Ձեռնարկված քայլերի արդյունքում ուսուցիչն ազատվել է աշխատանքից: Առաջիկայում ԿԳՄՍ նախարարությունը նաեւ պատրաստվում է հայց ներկայացնել՝ նշված ուսուցչին մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝դեկտեմբերի 10-ից 11-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 163 դեպք, որից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՔԻՉ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՎԵԼ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարց ենք ուղղել՝ 2024թ. նոյեմբերի 25-ի դրությամբ Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում քանի՞ ուսուցիչ է կամավոր ատեստացիային հաջող մասնակցելու արդյունքում աշխատավարձի հավելում ստանում, որանց քանի՞ տոկոսն է աշխատավարձի որքան տոկոսի հավելում ստանում: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների 183 մանկավարժ անցել է կամավոր ատեստավորում, որոնց դրույքաչափը գործողից դարձել է 200.000 հազար դրամ: 127 մանկավարժ, ըստ հավաքագրած տոկոսի, ստանում են նաեւ հավելավճարներ՝30-50%-ի չափով»: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում է 1575 ուսուցիչ, նրանց քիչ մասն է ատեստավորվել, աշխատավարձի հավելավճար ունեցել:

ԲՈՒԺԿԵՏԻ ՏԱՆԻՔԸ ՉՆՈՐՈԳԵՑԻՆ

2020 թվականի օգոստոսից սահմանամերձ, հեռավոր Բարեկամավան գյուղի բուժկետի տանիքի կեսը ուժգին քամուց պոկված է, անձրեւները, ձյունը լցվում են շենքից ներս՝ հակասանիտարական վատ վիճակ ստեղծելով բուժկետում: Բուժկետը գործում է Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ: Անցած 4 տարում բազմաթիվ անգամ դիմել եմ Տավուշի մարզպետարան՝ հարցնելով, թե երբ են նորոգելու բուժկետի շենքի տանիքը: Այս տարվա հուլիսին ուղարկած հարցմանը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը պատասխանել է. «Նոյեմբերյան համայնքի «Կոթիի ԳԲԱ» ՊՈԱԿ-ի ենթակայության Բարեկամավանի բուժկետի շենքի վերանորոգման եւ վերակառուցման համար կադաստրի վկայական ստանալու գործընթացը ավարտական փուլում է (որից հետո կսկսվի վերանորոգում-վերակառուցումը): Բուժակ-մանկաբարձական կետը տեղափոխված է Բարեկամավանի նախկին գյուղապետարանի վերանորոգված տարածք եւ իր գործունեությունը ժամանակավորապես ծավալում է այնտեղ»: Հայկ Ղալումյանը 2021թ. ապրիլի 8-ից Տավուշի մարզպետն է, անցած 3 տարում ինչո՞ւ չի իմացել, որ իր ենթակայությամբ գործող Բարեկամավանի բուժկետը կադաստրի վկայական չունի, որ վկայական հանեն: 2005թ.-ին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, «Վորլդ վիժն» եւ «Ապավեն համայնքներին» կազմակերպությունները վերանորոգել, կահավորել են Բարեկամավանի բուժկետի շենքը, առանց կադաստրի վկայականի ո՞ւմ պատկանող շենքն են նորոգել, կահավորել այդ կազմակերպությունները: Նոյեմբերի 25-ին Բարեկամավանի բուժկետի մասին նոր հարցում ենք ուղարկել Տավուշի մարզպետին, բուժկետի նորոգման մասին բոլորովին այլ պատասխան են տվել. «Բարեկամավանի բուժակա-մանկաբարձական կետը ներկայումս գործում է նախկին գյուղապետարանի ծրագրով վերանորոգված եւ կահավորված սենյակում: ԲՄԿ-ի նախկին շենքի կադաստրում գրանցման, վերանորոգման եւ դրա հետ կապված հարցերով առաջարկում ենք դիմել Նոյեմբերյանի համայնքապետարան»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ

Առողջապահական ոլորտն այն ոլորտներից է, որը մշտապես բնակչության կենտրոնում է: «Ժողովուրդ» օրաթերթը մշտապես ահազանգեր է ստանում մարզերի բնակիչներից, որ բժիշկներ չկան, իսկ եղածներն էլ՝ մասամբ են տիրապետում իրենց մասնագիտությանը եւ այդպիսով էլ առաջանում են շատ անհարմարություններ:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց հասկանալ՝ ինչ է կատարվում այս ոլորտում եւ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ ՀՀ-ում բժիշկների թվաքանակի մասին:

Այսպիսով, ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների, ՀՀ-ում բժիշկների թվաքանակը կազմում է 13 943: Եթե համեմատենք Երեւանում եւ մարզերում բժիշկների թվաքանակը, ապա բժիշկների մեծ մասը՝ թվով 10 096-ը, Երեւանում են:

Արագածոտնի մարզում բժիշկների թվաքանակը 271-ն է, Արարատի մարզում՝ 458-ը, Արմավիրի մարզում՝ 410-ը, Գեղարքունիքի մարզում՝ 355-ը, Լոռու մարզում՝ 541-ը, Կոտայքի մարզում՝ 633-ը, Շիրակի մարզում՝ 587-ը, Սյունիքի մարզում՝ 247-ը, Վայոց ձորի մարզում՝ 93-ը, Տավուշի մարզում՝ 252-ը:

Անդրադառնանք նաեւ, թե որքան է կազմում միջին բուժանձնակազմի թվաքանակը Երեւանում եւ մարզերում:

Այստեղ եւս առաջատարը մայրաքաղաք Երեւանն է՝8 638 հոգով, երկրորդ տեղում Շիրակի մարզն է, որտեղ բուժանձնակազմի թվաքանակը կազմում է 1 187 մարդ, երրորդ տեղում Լոռու մարզն է, որտեղ բուժանձնակազմի թվաքանակը կազմում է 994 մարդ, իսկ բուժանձնակազմի ամենաքիչ թվաքանակը Վայոց ձորի մարզում է, որը հասնում է 188-ի:

Առավել հետաքրքիր է, թե որքան հիվանդանոցային մահճակալներ կան:

Այսպիսով՝ ՀՀ-ում ընդհանուր հիվանդանոցային մահճակալների քանակը 12 480 հատ է, որից 8 295-ը մայրաքաղաք Երեւանում է, 180 հատը՝ Արագածոտնի մարզում, 480-ը՝ Արարատի մարզում, 377-ը՝ Արմավիրի մարզում, 730-ը՝ Գեղարքոհինքի մարզում, 466 մահճակալ՝ Լոռու մարզում, 498՝ Կոտայքի մարզում, 751՝ Շիրակի մարզում, 402՝ Սյունիքի մարզում, 85 մահճակալ՝ Վայոց ձորի մարզում, 216 մահճակալ՝ Տավուշի մարզում:

«Ժողովուրդ» օրաթերթը կից ներկայացնում է նաեւ առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների (բացառությամբ բուժական մանկաբարձական կետերի, մասնավոր բուժական եւ ստոմատոլոգիական կաբինետների) քանակը՝ ըստ մայրաքաղաք Երեւանի եւ ՀՀ մարզերի:

Այսպիսով՝ մայրաքաղաք Երեւանում առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների քանակը կազմում է 118-ը, Արագածոտնի մարզում՝ 24-ը, Արարատի մարզում՝ 59-ը, Արմավիրի մարզում՝ 59-ը, Գեղարքունիքի մարզում՝39-ը, Լոռու մարզում՝39-ը, Կոտայքի մարզում՝45-ը, Շիրակի մարզում՝32-ը, Սյունիքի մարզում՝16-ը, Վայոց ձորի մարզում՝ 8-ը, իսկ Տավուշի մարզում՝27-ը:

Նշենք, որ ըստ վիճակագրական կոմիտեի հրապարակման՝ տվյալները 2023 թվականի են:

Համեմատելով 2020 թվականի հետ, ակնհայտ երեւում է, որ 2023 թվականին թե՛ բժիշկների թվաքանակը, թե՛ միջին բուժանձնակազմի թվաքանակը, թե՛ հիվանդանոցային մահճակալների թվաքանակը ավելի շատ են եղել: Միգուցե այդ հանգամանքը պայմանավորված է կորոնավիրուսի համաճարակի եւ պատերազմի հետ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՁՄԵՌԱՅԻՆ ԱՆՎԱԴՈՂԵՐՈՎ ԵՐԹԵՎԵԿԵԼԸ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋ

Երեկվանից ուժի մեջ է մտել օրենսդրական կարգավորումը, ըստ որի՝ ձմեռային անվադողերով երթեւեկելը մարտի 31-ը ներառյալ դառնում է պարտադիր պահանջ: Այդ մասին հայտնում են ՆԳՆ-ից:

Տրանսպորտային միջոցի շահագործումը կարգելվի, եթե.

թեթեւ մարդատար ավտոմոբիլների եւ մինչեւ 3,5 տոննա թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլների վրա տեղադրված չեն ձմեռային անվադողեր,

սառցակալած կամ ձյունածածկ ճանապարհային պայմաններում շահագործման համար նախատեսված ձմեռային անվադողերի նախշանկարի մնացորդային բարձրությունը նշված ճանապարհային պայմաններում երթեւեկության ժամանակ 4 միլիմետր եւ դրանից պակաս է,

հունիս, հուլիս եւ օգոստոս ամիսներին կարգելվի տրանսպորտային միջոցների երթեւեկությունը, եթե դրանց վրա տեղադրված են բութակային հակասահքային անվադողեր:

Նախատեսված պահանջների խախտման համար գործում են վարչական պատասխանատվության միջոցներ:

Ե՞ՐԲ ԿԲԱՐՁՐԱՆԱՆ ԹՈՇԱԿՆԵՐԸ

Թոշակառուները մշտապես բողոքում են, որ ստացած թոշակն այնքան քիչ է, որ ոչնչի չի բավականացնում: Դիցուք՝40.000 դրամ թոշակի մեծ մասը տրամադրում են դեղորայք գնելուն, իսկ ավելացածը չի բավականացնում կոմունալ վճարումների եւ սնունդ գնելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը ահազանգեր է ստանում թոշակառուներից՝նույն խնդրով պայմանավորված: Ահազանգածներից շատերը նշում են՝հույս չունեն, որ թոշակը կբարձրանա:

Այսօր «Ժողովուրդ» օրաթերթին էր ահազանգել 40-ամյա տիկին Գոհարը, ով ունի հաշմանդամության կարգ եւ ստանում է 38.000 դրամ թոշակ, սակայն, ինչպես վերը նշեցինք, փողը չի բավարարում:

Քաղաքացին նաեւ նշեց, որ չգիտի, թե ինչպես է նշելու Ամանորը ստացած 38.000 դրամով:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն՝ պարզելու՝ սպասվում է առաջիկայում թոշակների բարձրացում, թե ոչ:

«Ժողովուրդ» օրաթերթին աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից փոխանցեցին, որ հաշմանդամության նպաստի չափերը՝ ֆունկցիոնալության խոր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի համար կազմում է 39.000 դրամ, ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի համար՝37.500 դրամ, ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 36.000 դրամ, ֆունկցիոնալության խոր կամ ծանր կամ միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող երեխայի համար՝39.000 դրամ: Թոշակների բարձրացում այս պահին նախատեսված չէ: Հարցին՝ արդյոք եկող 2025 թվականին բարձրացումներ սպասվում են, թե ոչ, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից պատասխանեցին, որ եկող տարվա բյուջեով նախատեսված չէ:

Մինչ Հայաստանում թոշակառուները բողոքում են իրենց ստացած թոշակի չափից, հարեւան Վրաստանում գալիք 2025 թվականին թոշակները կհասնեն մինչեւ 200 դոլարի, ինչը համարժեք է 78.974 ՀՀ դրամի:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ. ՔՆՆԱՐԿՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի գլխավորությամբ Սեւանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումների կողմ գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվել է իրականացվող վերահսկողության համատեղ միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքը:

«Այսպիսով՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում իրականացվել է 1698 ստուգայց, որի ընթացքում արձանագրվել է ձկնագողության 12, ապօրինի վաճառքի 72 դեպք, առգրավվել է 1215 կգ «սիգ» տեսակի ձուկ, 21 լողամիջոց եւ 2 ձկնորսական ցանց:

Նախապատրաստվում են նյութեր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (թվով 18) եւ ՀՀ քրեական օրենսգրքի (թվով 10) համապատասխան հոդվածներով:

Ձեկուցվել է նաեւ, որ շարունակվում են հանդիպումները ձկնորսների հետ՝ բացատրելու ձվադրման ժամանակահատվածում որսի արգելքի կարեւորությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են խստացված միջոցառումների ժամանակացույցի եւ ստուգայցերի ձեւաչափի վերաբերյալ մի շարք հարցեր:

Նախարարը հույս է հայտնել, որ իրականացվող գործողությունները չեն հանդիպի ապօրինի դիմադրության եւ մեր քաղաքացիները կշարունակեն ըմբռնումով մոտենալ իրականացվող միջոցառումներին»,- ասված է շրջակա միջավայրի նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

2025-ԻՆ ԳՆԱՃԸ ԿԱՐՈՂ Է ՄԻՆՉԵՎ 0.5 ՏՈԿՈՍ ԿԱՋՄԵԼ

2025 թվականի համար ակնկալում ենք, որ տնտեսական աճը մեր երկրի պոտենցիալ աճին մոտ թիվ է լինելու՝ 5 տոկոսի շրջանակներում:

Այս մասին Կենտրոնական բանկում հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ հայտնել է ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը:

Անդրադառնալով բանկային համակարգի աշխատանքին՝ Մարտին Գալստյանն ասաց, որ այս տարվա ընթացքում համակարգը բավականին մեծ շահույթով է աշխատել:

Արձագանքելով հարցին, թե 2025թ. հունվարի 1-ից նախատեսված տրանսպորտի գների բարձրացումը ի՞նչ ձեւով կազդի գնաճի վրա՝ ԿԲ նախագահը հայտնել է. «Տրանսպորտի գների փոփոխության հետեւանքով եկող տարվա ընթացքում գնաճը կարող է մինչեւ 0.5 տոկոս կազմել: Դա առավելագույն գնահատականն է»:

Roots Furniture

ԳԱՂԱՓԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՀՈՒՅՔԻ ԽՈՇՈՐ ԲԻԶՆԵՍ

Roots Furniture կահույքի ընտանեկան արտադրությունը, որը սպառողին առավել հայտնի է Acobian Furniture ապրանքանիշով, երկու տասնամյակից ավելի պատմություն ունի. բոլոր ավանդույթները փոխանցվել են ընկերության տնօրեն Լեւոն Ստեփանյանի պապիկից:

Ընկերության արտադրությունն իրականացվում է առանց թափոնների արտանետման, ներդրված է հատուկ փոշեհեռացմապպն համակարգ, որը գործարանի տարածքից հավաքում է թափը եւ դարձնում վառելիք՝ լուծելով ջեռուցման խնդիրները:

Roots Furniture ընկերության գործընկերն «Ակբա լիզինգ»-ն է, որի աջակցությամբ այն համալրվել է արեւային վահանակներով եւ հատուկ տեխնոլոգիաներով՝ ընդլայնելով եւ ավտոմատացնելով արտադրությունն ու զրոյացնելով հոսանքի ծախսերը:

«Տարիներ առաջ խորանալով ավտոմատացման մեջ՝ ռոբոտներ, ռոբոտաշինություն, ավտոմատացում կարողացա համադրել տրադիցիոն արտադրությունը նոր տեխնոլոգիաների հետ: Այսպես ստեղծեցի կահույքի ավտոմատացված արտադրություն, որը ապահովում է որակ եւ ինքնարժեքից ցածր գներ: Ինդուստրիալ 4-րդ հեղափոխությունը «խելացի» սարքերի մասին է, որի մշակույթը փորձում ենք բերել Հայաստան. «խելացի» սարքերի մուտքը Հայաստան նմանատիպ արտադրամասերի միջոցով պետք է լինի: «Ակբա լիզինգ»-ի հետ համագործակցության արդյունքում ձեռք ենք բերել նոր տեխնոլոգիաները, թափոնների վերամշակման մեծ փոշեկուլներ, ջեռոց, չորանոցներ եւ արեւային պանելներ՝ դարձնելով արտադրությունն ավելի արագ, որակյալ եւ նվազագույն սխալներով: «Ակբա լիզինգ»-ի հետ շատ հեշտ է եղել համագործակցությունը»,- նշել է Roots Furniture ընկերության տնօրեն Լեւոն Ստեփանյանը:

Roots Furniture-ի արտադրանքն այժմ ներկայացված է Հայաստանի մի քանի տասնյակ խանութներում: Այժմ ընկերությունն արտահանումներ է իրականացնում միայն Ռուսաստան, առաջիկայում ցանկանում են ընդլայնել արտահանման աշխարհագրությունը:

«Ակբա լիզինգ»-ի 100% բաժնետերը «Ակբա» բանկն է:

«Ակբա լիզինգ»-ը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԲԱՆԿԱՅԻՆ

IDMerch. IDBank-Ի ՆՈՐ ՎԱՐԿԱՏԵՍԱԿԸ

IDBank-ը բիզնեսների համար հերթական կարեւոր ու հիանալի նորությունն է պատրաստել: Բանկն իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է նոր՝ IDMerch բիզնես վարկը/օվերդրաֆտը:

IDMerch-ի հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ վարկը կամ օվերդրաֆտը բիզնեսին տրամադրվում է POS տերմինալների եւ/կամ Իդրամ QR/online checkout վճարային համակարգի միջոցով իրականացված շրջանառությունների հիման վրա:

IDBank-ի Կորպորատիվ բիզնեսի տնօրեն Տիգրան Մխիթարյանի խոսքով՝ թիմը երկարատեւ աշխատանք է կատարել այս պրոդուկտի մշակման գործում, քանի որ սա բիզնեսների համար առավել մեծ հնարավորություններ է բացում. «IDMerch-ի վարկավորումը ավելի շատ բիզնեսների է հասանելի: Այս պրոդուկտի շնորհիվ տարբեր իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերեր կկարողանան առավել լավ պայմաններով, արագ վարկավորվել, ինչն էլ կնպաստի փոքր եւ միջին բիզնեսների զարգացմանն ու կայունացմանը», - նշեց Տիգրան Մխիթարյանը:

Վարկի/օվերդրաֆտի մեծությունը կարող է կազմել POS տերմինալներով եւ/կամ Իդրամ QR/online checkout վճարային համակարգերի միջոցով իրականացրած շրջանառությունների մինչեւ տասնապատիկը: Բացի այդ, բիզնեսի ֆինանսական վերլուծության գործընթացը պարզեցված է եւ իրականացվում է արագ ու կարճ ժամկետներում: Սա նշանակում է, որ կորպորատիվ հաճախորդները, հատկապես՝ փոքր եւ միջին բիզնեսի ընկերությունները, արագ վարկավորման համար երկար ժամանակ ծախսելու կարիք այլեւս չեն ունենա:

Ինչպես նաեւ, ընկերությունը հնարավորություն կունենա ընտրել վարկի/օվերդրաֆտի արժույթը՝ ՀՀ դրամ կամ ԱՄՆ դոլար: Բիզնես վարկը/օվերդրաֆտը հնարավոր է մարել մինչեւ 60 ամիս ժամկետում՝ առանց տրամադրման միջնորդավճարի, իսկ օվերդրաֆտի դեպքում կարող է տրամադրվել նաեւ 45 օր տոկոսագումարների մարման արտոնյալ ժամանակահատված: Մանրամասներին կարող եք ծանոթանալ բանկի կայքում:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

«Ֆասթ» բանկի հաճախորդների համար այսուհետ հասանելի կլինի Apple Pay վճարման ծառայությունը, որն ավելի արագ, ապահով եւ անվտանգ գործարքներ է իրականացնում Apple սարքավորումների միջոցով: Apple Pay գործիքը հնարավորություն է տալիս կցել քարտը iPhone, Apple Watch, iPad, Mac սարքերում եւ անհպում վճարումներ իրականացնել ոչ միայն առեւտրի, սպասարկման կետերում, սրճարաններում, այլեւ առցանց խանութներում եւ հավելվածներում:

Քարտապանների տվյալներն ամբողջությամբ ապահով են, քանի որ համակարգը չի պահպանում քարտի տվյալներն ամբողջությամբ սարքի կամ Apple սերվերի մեջ, ոչ էլ կիսվում է դրանցով գործարքներն իրականացնելիս: Համակարգը գործարկում է եզակի չկրկնվող ծածկագիր յուրաքանչյուր գործողության ժամանակ:

«Ֆասթ» բանկի հաճախորդները հեշտությամբ կարող են իրենց քարտը կցել Apple Wallet-ին, ընդամենը մուտք են գործում բանկի հավելված, ապա անցնում քարտերի բաժին էկրանի ներքեւի հատվածում կարելի է տեսնել «Add to Apple Wallet» գործողության կոճակը, սեղմում են այն եւ հետեւում հրահանգներին: Քարտը հնարավոր է կցել վճարման անհպում համակարգին նաեւ Apple Wallet հավելվածի միջոցով՝ մուտք են գործում, սեղմում «+» նշանը եւ հավաքում քարտի անվտանգության ծածկագիրը: Քարտը հավելվածին կցելուց հետո քարտապաններն անմիջապես կարող են գործարքներ իրականացնել՝ պարզապես մոտեցնելով սարքը POS տերմինալներին, որոնք ընդունում են անհպում վճարումներ: Հավելենք նաեւ, որ գործարքը վավերացվում է Face ID, Touch ID նույնականացման համակարգերով կամ այդ պահին սարքի գաղտնաբառը հավաքելով:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

2025-ԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Ե՞ՐԲ ԶԱՐԴԱՐԵԼ ՏՈՆԱԾԱՌՆ ՈՒ Ի՞ՆՉ ԳՈՒՅՆԵՐՈՎ

Ամանորը մոտենում է, իսկ դա նշանակում է, որ շուրջբոլորը տոնական մթնոլորտ է ստեղծվելու:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե երբ պետք է զարդարել տոնածառն ու ինչ գույներով:

Այսպիսով՝ տոնածառը զարդարելու լավագույն ժամանակը կախված է անձնական նախասիրություններից եւ ավանդույթներից: Օրինակ՝ շատերը նախընտրում են տոնածառը զարդարել դեկտեմբերի սկզբին եւ այդպիսով էլ ստեղծել ամանորյա տրամադրություն:

Ավանդական մոտեցմամբ՝ տոնածառը զարդարվում է նաեւ Ամանորին նախորդող շաբաթը՝ մոտավորապես 20-25-ի ընթացքում:

Հայկական ավանդույթների համաձայն՝ հաճախ տոնածառը զարդարվում է դեկտեմբերի վերջին:

Հայաստանում տոնածառ զարդարելու ավանդույթները հիմնականում կապված են Նոր տարվա եւ Սուրբ Ծննդյան տոների հետ:

Տոնածառ զարդարելն ունի նաեւ ավանդական մոտեցում:

Հայկական տներում զարդարանքները հաճախ ունեն ազգային եւ ընտանեկան նշանակություն:

Օրինակ՝ տոնածառի վրա կախում են չամիչ, չրեր կամ մրգեր, որոնք խորհրդանշում են առատություն եւ բարգավաճում: Թղթյա եւ ձեռագործ զարդեր պատրաստելը եւս ավանդական է՝ հատկապես ընտանիքի երեխաների մասնակցությամբ:

Հայկական մշակույթում տոնածառը հաճախ խորհրդանշում է նոր կյանք, հույս եւ առատություն:

Տոնածառ զարդարելու արարողությունը հաճախ վերածվում է ընտանեկան տոնի, որտեղ բոլորը հավաքվում են միասին: Այդ ընթացքում ընտանիքները նաեւ սկսում են պատրաստել ավանդական ամանորյա ուտեստներ՝ գաթա, տոլմա եւ փախլավա:

Իսկ ի՞նչ գույներով զարդարել տոնածառը:

Այս հարցը շատերին է մտատանջում, սակայն առաջին հերթին պետք է հասկանալ, որ ամեն բան կախված է անձնական նախընտրություններից:

Ինչպես արդեն հայտնի է, 2025 թվականը չինական օրացույցով համարվում է փայտե օձի տարի եւ ըստ ֆենշույի ու տարվա խորհրդանիշի՝ տոնածառի զարդարման գույներն ու ոճը կարող են ընտրել խորհրդանշական նշանակություն ունեցող գույներով:

Օրինակ սպիտակ տոնածառը կարելի է զարդարել կանաչ խաղալիքներով, քանի որ այն խորհրդանշում է բարգավաճում, աճ, բնականություն եւ նոր սկիզբ:

Փայտի տարրի հետ կապված՝ շագանակագույնը խորհրդանշում է կայունություն եւ վստահություն: Տարվա խորհրդանիշին համապատասխանող զարդերից կարելի է օգտագործել նաեւ փայտյա զարդերը, որը նաեւ օրիգինալ կլինի: Կարելի է օգտագործել ոսկեգույն կամ դեղին զարդարանքներ, որոնք կբերեն առատություն, հաջողություն եւ լուսավորություն:

Անզուգական եւ մշտապես արդի կարմիր գույնը ասոցացվում է տոնական, կրակոտ էներգիայի, երջանկության եւ հաջողության հետ: Այս գույնի զարդարանքներով կարելի է ընդգծել տոնականությունը:

Այս գույները ոչ միայն համահունչ են 2025-ի խորհրդանիշներին, այլեւ ստեղծում են ներդաշնակ, տոնական եւ հիանալի մթնոլորտ տանը:

2025-ը համարվում է փոփոխությունների, ներդաշնակության եւ ներքին ուժերի տարին:

Տոնածառի ճիշտ գույները կօգնեն ներգրավել դրական էներգիա եւ ամրապնդել ձեր մտադրությունները նոր տարում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՇՈՂԱԿԱԹ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՖԻԼՄԸ ՀԱՂԹԵԼ Է ՀՌՈՄԻ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ

Արցախյան 44-օրյա պատերազմի մասին պատմող Շողակաթ Վարդանյանի «1489» ֆիլմը հաղթող է ճանաչվել Հռոմի վավերագրական ֆիլմերի միջազգային փառատոնում: Այդ մասին ֆեյսբուքյան իր էջում տեղեկացրել է ֆիլմի ռեժիսոր Շողակաթ Վարդանյանը:

«Սա մեծ պատիվ եւ մեծ պատասխանատվություն է»,-գրել է նա:

Հիշեցնենք, որ 44-օրյա պատերազմի մասին պատմող «1489» ֆիլմը Հայկական ազգային կինոակադեմիան» չներկայացրեց «Օսկարի»՝ չնայած, որ ֆիլմը 2023 թ. արժանացել է Ամստերդամի վավերագրական ֆիլմերի միջազգային փառատոնի (IDFA) գլխավոր մրցանակին, նաեւ դոկումենտալ կինոյի աշխարհի ամենահեղինակավոր կինոփառատոնում՝ IDFA-ում արժանացել էր«Լավագույն ֆիլմ» գլխավոր մրցանակին:

Ֆիլմը ներկայացնում է Վարդանյանների ընտանեկան մթնոլորտը, նրանց հույզերը, ապրումները, տառապանքը, սպասումները 2020 թվականի 44-օրյա պատերազմի օրերին, երբ նրանք կորցնում են կապը ռազմաճակատում գտնվող սիրելի որդու, սիրելի եղբոր՝ 21-ամյա Սողոմոն Վարդանյանի հետ:

«ԻՄ ԱՄԵՐԻԱ, ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ». ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Ամերիաբանկի»՝ «Իմ Ամերիա, իմ Հայաստան» նախագծի շրջանակում դեկտեմբերի 10-ի դրությամբ քվեարկությանն արդեն իսկ մասնակցել է ավելի քան 45 հազար մարդ: Նախագծի նպատակն է մարդկանց համախմբել մեկ գաղափարի շուրջ եւ միասին ընտրել, թե որ ոլորտի զարգացմանն է ուղղվելու «Ամերիաբանկի» 2025թ.-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ու բարեգործական ծրագրերի բյուջեից 100 մլն ՀՀ դրամը:

Քվեարկության միջանկյալ արդյունքներով առաջատար երեք ոլորտներն են երեխաների առողջությունը, կրթությունը, գիտությունը՝ քվեների, համապատասխանաբար, 54,4, 19,8 եւ 6,3 տոկոսներով: Բացի նշված ոլորտներից, քվեարկության են ներկայացված նաեւ հետեւյալ ուղղությունները՝ կայուն զարգացում, ՓՄՁ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, մշակույթ եւ սպորտ:

«Ամերիաբանկ»-ը մեկ հոլովակով ներկայացրել է Հայաստանի զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող 8 ոլորտներն ու դրանց հետեւում կանգնած մարդկանց՝ իրենց երազանքներով ու նպատակներով:

Հիշեցնենք, որ«Ամերիաբանկի» կայքում քվեարկությանը մասնակցել կարող են բոլորը, իսկ Ամերիաբանկի հաճախորդների քվեն MyAmeria հավելվածով քվեարկելու դեպքում տասնապատկվում է: Քվեարկության արդյունքներն «Ամերիաբանկի»-ի կայքում թարմացվում են յուրաքանչյուր օր: Քվեարկությունը բաց է մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

«Ամերիաբանկի» մասին

«Ամերիաբանկ»-ը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո՝ բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները:

«Ամերիաբանկը», որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ

Գրոսմայստեր Շանթ Սարգսյանը միանձնյա առաջատար է Դոհայում ընթացող «Qatar Masters Open 2024» շախմատի միջազգային մրցաշարում: Այս մասին տեղեկացնում են Շախմատի ֆեդերացիայից:

Շանթից կես միավորով հետ են մնում գրոսմայստերներ Անդրեյ Եսիպենկոն, Արջուն Էրիգաիսին եւ Սալեհ Սալեմը:

Այսօր Շանթը կմրցի Արջուն Էրիգաիսիի հետ:

Մրցաշարի ավարտին մնացել է 3 խաղափուլ:

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ԳՈՐԾԱՐՔ

«Ռեալը» հետաքրքրված է Լոնդոնի «Չելսիի» կիսապաշտպան Քոուլ Պալմերի ծառայություններով:

Աղբյուրի համաձայն՝ մադրիդյան ակումբի նախագահ Ֆլորենտինո Պերեսը եւ մարզական ղեկավարությունը գնահատում են Պալմերի եւ՛ ֆուտբոլային որակները, եւ՛ համաշխարհային մակարդակի խաղացող դառնալու նրա ներուժը: «Ռեալում» ցանկանում են անգլիացու միջոցով սկիզբ դնել թիմը երիտասարդացնելու նոր ռազմավարությանը:

Ընթացիկ մրցաշրջանում 22-ամյա խաղացողը «Չելսիի» կազմում մասնակցել է 17 հանդիպման՝դառնալով 11 գոլի եւ 6 գոլային փոխանցման հեղինակ:

Պալմերի գործող պայմանագրի ժամկետը լոնդոնյան թիմի հետ նախատեսված է մինչեւ 2033 թվականի հունիսի 30-ը: Transfermarkt-ը նրա տրանսֆերային արժեքը գնահատում է 90 միլիոն եվրո:

ՄԲԱՊԵՆ ԿԱՐՈՂ Է ԱՅԼԵՎՍ ՉԽԱՂԱԼ 2024–ԻՆ

Մադրիդի «Ռեալի» հարձակվող Կիլիան Մբապեն կարող է բաց թողնել 2024 թվականի մնացած մասը վնասվածքի պատճառով, որը ստացել է Չեմպիոնների լիգայի ընդհանուր փուլի 6-րդ տուրի՝ «Ատալանտայի» հետ խաղում (3:2):

Աղբյուրի համաձայն՝ Կիլիանի վնասվածքի բնույթը դեռ պարզված չէ, սակայն նշվում է, որ մկանային թեկուզ աննշան անհարմարության դեպքում ֆրանսիացին չի մասնակցի «Ռայո Վալյեկանոյի» հետ Լա Լիգայի հաջորդ հանդիպմանը (դեկտեմբերի 14), եւ կարող է բաց թողնել նաեւ Միջմայրցամաքային գավաթի եզրափակիչը (դեկտեմբերի 18):

Ավելի լուրջ վնասվածք ստանալու դեպքում Մբապեն բաց կթողնի Լա Լիգայի 2024 թվականի վերջին հանդիպումը «Սեւիլիայի» հետ, որը կկայանա դեկտեմբերի 22-ին:

Ֆուտբոլիստը երեկ՝ դեկտեմբերի 11-ին, բուժզննում անցավ:

Այս մրցաշրջանում Մբապեն բոլոր մրցաշարերում մասնակցել է 21 հանդիպման, որոնցում դարձել է 11 գոլի եւ 2 գոլային փոխանցման հեղինակ:

● *Դեկտեմբերի 15-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան պետական դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Երեք ընկեր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-6.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:

Մետաքսիա Մարգարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիմողի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտնում ենք, որ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ կարող են արդյոք պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրվել կառուցապատման իրավունքով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչպես կարող է տնօրինվել հողամասի կառուցապատման իրավունքը:

Հունան Մուրադյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից: Կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաեւ կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Թեպետ վերջին տարիներին Հայաստանում շատ ենք հանդիպում տղամարդ մատնահարդարների, ինչը մեզանում տարածված երեւույթ չէր, այնուամենայնիվ անցորդների համար դեռեւս անսովոր է տեսնել «Արման նեյլ բար» ձեւակերպմամբ մատնահարդարման սրահը:

Համաձայնեք, սակայն, որ ակնառու ու հետաքրքիր է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9 -1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1
Լոռի	- 4 - 8 +1 + 4
Տավուշ	0 - 4 +3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4 + 4 + 7

Արարատ	0 - 4 +6 + 8
Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Երեւան	0 - 2 + 2 + 4

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*